



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 13.01.16 թ.

Ելք № 001

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք Ձեզ, որ չնայած հարկային ոլորտում իրավակիրառական գործընթացում առկա խնդիրների, հարկ վճարողները հաճախ ձեռնպահ են մնում ուղղակի դիմել և իրենց կարծիքը ցանկանում են ներկայացնել հասարակական կազմակերպությունների միջոցով:

Այդ կապակցությամբ կից ներկայացվում է հարկ վճարողի գրությունը և խնդրում ենք պարզաբանել բարձրացված հարցերին:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան

Իրավիճակը.

Համաձայն Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերջին պարբերության՝ 2016 թվականի հունվարի 1-ից սկսած՝ հաշվարկային փաստաթղթերը (բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոնների և ապրանքների արտահանման դեպքում դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի) դուրս են գրվում բացառապես էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից գույքի վարձակալության հանձնելը կամ ապրանքի մատակարարում չհամարվող գույքի օտարման գործաքները չեն համարվում ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ, ուստի նա կարող է չունենալ ՀՎՀՀ և նրա փոխարեն հարկը կվճարի հարկային գործակալը:

Հաղցադրումը.

Խնդրում ենք ձեր պարզաբանումը հետևյալ հարցի կապակցությամբ.

Արդյո՞ք տարածվում է Հարկերի մասին ՀՀ օրենքի 15.1 հոդվածի վերոհիշյալ դրույթը անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց վերոհիշյալ գործարքների վրա, այսինքն կարո՞ղ է արդյոք ֆիզիկական անձը գույքի վարձակալության կամ ապրանքի մատակարարում չհամարվող գործարքների մասով շարունակի դուրս գրել թղթային հաշվարկային փաստաթուղթ: